ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ՀՀ ք. Իջևան Երկու հազար տասնվեց թվականի հունվարի տասնհինգին*

**<Իջևանի տպարան>** **ԲԲԸ-ն**, պետական գրանցամատյանում բյուջետային հիմնարկի (կազմակերպության) գրանցման (հաշվառման) վկայական N 01Ա014824, տրված 25.08.1995թ., հասցեն՝ ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան, Ա.Մելիքբեկյան 4, ՀՎՀՀ 07600388, այսուհետ „Կողմ-1„ ի դեմս գործադիր տնօրեն՝ **Գառնիկ Կամոյի Ճաղարյանի,** ծնված 26.02.1962թ., ծննդավայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաքացիությունը՝ Հայաստանի Հանրապետություն, սեռը՝ արական, անձնագիր AM0328878, տրված 08.06.2011թ. 005-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ ք. Երևան, Շոպրոնի փող., 1-ին նրբ., շենք 5 /հինգ/, բն. 9 /ինը/ հասցեում, որը գործում է կանոնադրության հիմման վրա /այսուհետ նաև՝ Կողմ-1/ և **Հայաստանի Հանրապետությունը** ի դեմս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի /այսուհետ նաև՝ Կողմ-2/, ի դեմս աշխատակազմի ղեկավար Մ.Մինասյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 27.12.2007թ. թիվ 1531-Ն որոշմամբ հաստատված Ծառայության կանոնադրության հիման վրա, ում անունից հանդես է գալիս Ծառայության աշխատակազմի **Իջևանի** տարածքային բաժնի պետ **Սոնյա Վոլոդյայի Մեհրաբյանը**, ծնված 05.11.1959թ. ծննդավայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաքացիությունը՝ Հայաստանի Հանրապետություն, սեռը՝ իգական, անձնագիր AM0296686, տրված 13.05.2011թ. 038-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջևան, Տերյան փող., տուն 6 /վեց/ հասցեում, որը գործում է 15.01.2016թ. տրված լիազորագրի հիման վրա, մյուս կողմից, /այսուհետ նաև՝ Կողմեր/, հիմք ընդունելով երկու հազար տասնմեկ թվականի հունվարի տասնութին երկուստեք կնքված <Անշարժ գույքի վարձակալության> պայմանագիրը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշել են 18.01.2011թ. երկուստեք կնքված <Անշարժ գույքի վարձակալության> պայմանագրում /այսուհետ նաև՝ Պայմանագիր/ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1/ Պայմանագրի 1.4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <1.4 Վարձատուն պարտավորվում է անշարժ գույքը վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել **մինչև երկու հազար քսան թվականի դեկտեմբերի քսանհինգը** ներառյալ:

2) Պայմանգիրը լրացնել նոր կետով՝ 1.5 հետևյալ բովանդակությամբ. **<1.5** Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները, ինչպես նաև նոր ստեղծվող միասնական ընդունարանները, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում և շինություններում տեղակայելուն ուղղված միջոցառումների արդյունքում՝<<Անշարժ գույքի վարձակալության>> պայմանագրով վարձակալության հանձնված տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող Ծառայության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ տարածք տեղակայման դեպքում, պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման:>

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում պատշաճ վավերացման պահից:
2.2. Սույն համաձայնագիրը համարվում է Կողմերի միջև երկու հազար տասնմեկ թվականի հունվարի տասնութին կնքված Պայմանագրի անբաժանելի մասը:
2.3. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 4(չորս) օրինակից:
2.4. Սույն համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասությունների դեպքում կիրառվում է սույն համաձայնագրով սահմանված դրույթը:
2.5. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Կողմերի համաձայնությամբ:
2.6. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությամբ:

2.7. Սույն համաձայնագրի, ինչպես նաև Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են՝ ՀՀ օրենդրությամբ սահմանված կարգով:
2.8. Սույն համաձայնագիրը ենթակա է գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<Իջևանի տպարան> ԲԲԸ
գործադիր տնօրեն՝ Գառնիկ [illegible]յան

Հայաստանի Հանրապետություն
[illegible] Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարության [illegible] մ/անձ
[illegible] Մեհրաբյան

ՀՀ ք.Իջևան Երկու հազար [illegible] թվականի հունվարի [illegible]

Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Իջևան նոտարական տարածքի նոտար՝ Անուշ Արտավազդի Ամիրխանյանիս կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են:

ԳՐԱՆՑՎԱԾ Է ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ___47___-ով

Գանձված է պետական տուրք <Պետական տուրքի մասին> և <Նոտարիատի մասին> ՀՀ օրենքների համաձայն

ՆՈՏԱՐ՝ [illegible] Արտավազդի Ամիրխանյան

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ**

Երկու հազար տասնմեկ թվականի հունվարի տասնութին

քաղաք Իջևան

Մենք՝ «Իջևանի տպարան» ԲԲԸ-ն, հասցե՝ ՀՀ ,Տավուշի մարզ, ք. Իջևան, Ա. Մելիքբեկյանի 4 , ի դեմս գործադիր տնօրեն Գառնիկ Ճաղարյանի, ծնված 26.02.1962թ, անձնագիր AB0207233, տրված 11.11.1996թ, 005 բաժնից, վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև 11.11.2011թ, հաշվառված ք. Երևան, Շոպրոնի 1 նրբ, 5-9 , որը գործում է կանոնադրության հիման վրա, որը կոչվելու է «Վարձատու» / և Հայաստանի Հանրապետությունը, որը հետագայում կոչվելու է «Վարձակալ» ՝ ի դեմս աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, որը ղեկավարվում է ՀՀ Կառավարության 2007թ դեկտեմբերի քսանյոթի թիվ 1531-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության » կանոնադրության 41-րդ կետի 3-րդ ենթակետի պահաջներով, որի անունից լիազորագրով, հաստատված երկու հազար տասնմեկ թվականի հունվարի տասնմեկին, հանդես է գալիս Ծառայության աշխատակազմի Իջևանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Սոնյա Մեհրաբյանը , անձնագիր AA0497725, տրված 14.11.1996թ, 038 բաժնից, վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև 14.11.2011թ, հաշվառված ՝ք. Իջևան, Տերյան 6 , կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին

Պայմանագրի առարկան

1.1 Վարձատուն Վարձակալի ժամանակավոր տիրապետմանն և օգտագործմանն է հանձնում Տավուշի մարզ, ք. Իջևան, Ա. Մելիքբեկյան 4 հասցեում գտնվող 401,7/ չորս հարյուր մեկ ամբողջ յոթ տասնորդական/ քառ. մետր տպարանի շենքի երկրորդ հարկից՝ ծածկագիր 4,5,6,7,8- 89,2/ ութսունինն ամբողջ երկու տասնորդական / քառ. մետր մուտքի և ելքի իրավունքով :

Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է ՀՀ 04.10.2005թ N 199-Ն օրենքի 23 հոդվածի պահանջների համաձայն՝ պայմանով , գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացվելու դեպքում :

1.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Գույքը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին / սեփականության վկայական թիվ 1644312, տրված երկու հազար տասը թվականի դեկտեմբերի տասնչորսին ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի Կադաստրի պետական կոմիտեի Իջևանի տարածքային ստորաբաժանման կողմից/ և այն ազատ է երրորդ անձանց իրավունքներից/ այլ անձանց վաճառված, նվիրված չէ, գրավ դրված չէ, արգելանքի տակ չի գտնվում/, որը հաստատված է ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Իջևանի տարածքային ստորաբաժանման կողմից երկու հազար տասնմեկ թվականի հունվարի տասներեքին տրված թիվ 0120255 միասնական տեղեկանքով:

1.3 <u>Վարձավճարի չափը կազմում է ամսեկան 140 000/ հարյուր քառասուն հազար / ՀՀ դրամ:</u>

1.4<u>Վարձատուն պարտավորվում է անշարժ գույքը վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել 5/ հինգ/ տարի ժամկետով :</u>

Կողմերի իրավունքները և պարտականությունները

Վարձատուն իրավունք ունի

2.1 Վարձակալից պահանջել Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան

2.2 Գույքն օտարել երրորդ անձի:Ընդ որում, նոր սեփականատիրոջն են անցնում սույն պայմանագրով նախատեսված վարձատուի իրավունքները և պարտականությունները, իսկ Գույքը մնում է ծանրաբեռնված Վարձակալի իրավունքներով:

2.3 Վարձակալից պահանջել Գույքը պահել պատշաճ վիճակում և վերադարձնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված վիճակում:

վերաբերվող փաստաթղթերով:

2.6 Վարձակալին տեղյակ պահել Գույքի թերությունների մասին :

2.7 Վարձակալին զգուշացնել Գույքի նկատմամբ երրոր անձանց բոլոր իրավունքների / գրավ, սերվիտուտ և այլն/ մասին

Վարձակալը իրավունք ունի

Գույքը հանձնել ենթավարձակալության վարձատուի գրավոր համաձայնությամբ:

2.8 Վարձակալը պարտավորություն չի կրում նախկին վարձակալի պարտավորությունների համար, ինչպես նաև իրավունք ունի բարելավել, կատարել վերանորոգմոն աշխատանքներ առանց վարձատուի թույլտվության:

Վարձակալը պարտավոր է

2.9Գույքը պահպանել սարքին վիճակում և օգտագործել դրա նշանակությանը համապատասխան

2.10 Կատարել Գույքի պահպանման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը

2.11 Գույքը վերադարձնել վարձատուին՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված վիճակում

2.12 Վճարել իր օգտագործած էլեկտրաէներգիայի, ջրամատակարարման, հեռախոսային, աբոնենտային, միջքաղաքային և այլ կոմունալ վճարումները, ինչպես նաև գույքի հետ կապված բոլոր հարկային վճարումները:

2.<u>13 Վարձավճարները վճարել յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա մինչև 10/տասը/՝ վարձատուի հաշվին :</u>

3. Այլ պայմաններ

3.1 Վարձակալության հանձնված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ վարձակալության պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

3.2 Կողմերը իրավունք ունեն ամեն տարի վերանայել պայմանագիրը շուկայական գներին համապատասխան:

3.3Պայմանագրի ժամկետից շուտ լուծելու դեպքում կողմերը միմյանց պարտավոր են տեղյակ պահել երկու ամիս առաջ:

Սույն պայմանագիրը կնքված է 4/չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Մեկ օրինակը մնում է Իջևան նոտարական տարածքում , մյուս օրինակները տրվում են կողմերին :

3.4 <u>Նոտարական վճարումները կատարվում է վարձատուի կողմից</u>:

3.5 Սույն պայմանագրի որևէ կետի խախտման դեպքում կողմերից խախտող կողմը կենթարկվի օրենքով սահմանված պատասխանատվության:

3.6 Սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կոմիտեի կադաստրի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 օրվա ընթացքում:

4.Կողմերի հասցեները և վավերապայմանները

**ՎԱՐՁԱՏՈՒ՝**

« Իջևանի տպարան»
ԲԲԸ
հասցե ՝ ՀՀ, Տավուշի մարզ,
ք. Իջևան, Ա. Մելիքբեկյանի 4
գործադիր տնօրեն՝ Ճաղարյան Գառնիկ
ծնված 26.02.1962թ, բնակվող
ք. Երևան , Շոպրոնի 1նրբ, 5-9
անձնագիր AB0207233,
տրված 11.11.1996թ, 005 բաժնից
Վավերականության ժամկետը
երկարաձգված է մինչև 11.11.2011թ

**ՎԱՐՁԱԿԱԼ՝**

Հայաստանի Հանրապետությունը
ի դեմս աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարության
հասցե՝ Երևան, Նալբանդյան 13
աշխատակազմի ղեկավար
Մինասյան Մինաս
Մինաս Մինասյանի լիազորված անձ
Ծառայության աշխատակազմի Իջևանի
սոցիալական ապահովության տարածքային
բաժնի պետ Մեհրաբյան Սոնյա
ծնված 05.11.1959թ, բնակվող ք. Իջևան,
Տերյան 6, անձնագիր AA0497725,
տրված 14.11.1996թ, 038 բաժնից
վավերականության ժամկետը
երկարաձգված է մինչև 14.11.2011թ

ՀՀ,ք.Իջևան, երկու հազար [illegible] թվականի հունվարի տասնութին
Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Իջևան նոտարական տարածքի նոտար Սանամ Սմբատի Հովսեփյանի կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրն ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև /իրավաբանական անձի/, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան ստորաբաժանումում 30 օրվա ընթացքում:

Գրանցված է սեղանամատյանում 58 ով:
Գանձված է պետական տուրք « ՀՀ պետական տուրքի մասին » օրենքի և ծառայության վճար «ՀՀ Նոտարիատի մասին »օրենքի 15 հոդ. համաձայն
Նոտար ________ Հովսեփյան Սանամ

ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:100

«Իջևանի տպարան» ԲԲԸ սեփականության իրավունքով պատկանող վարչական շենքի 2-րդ հարկից Իջևանի սոցիալա-կան ապահովության տարածքային բաժնին վարձակալությամբ տրամադրվող 89,2 ք.մ. (Յատակագծի 4,5,6,7,8) տարածքի

Ընդհանուր Մուտքի ելքի իրավունքով




ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Իջևանի տպարան» ԲԲԸ տնօրեն /Ա. Փանարջյան/



**Նոտարական ակտի կոդ:** 717-20201209-117-4834727
**Նոտարական ակտի գաղտնագիր:** 05BE5D

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ, ք. Իջևան, երկու հազար քսան թվականի դեկտեմբերի իններ

Կողմ 1- <<Իջևանի տպարան>> Բաց բաժնետիրական ընկերություն (ԲԲԸ), հասցե՝ Հայաստան, Տավուշ, Իջևան, Ա. Մելիքբեկյան/4, ի դեմս տնօրեն Գառնիկ Կամոյի Ճաղարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, հաշվառված՝ ք. Երևան, Շոպրոնի 1 նրբ. շ. 5 բն. 9

Կողմ 2 –Հայաստանի Հանրապետություն, Սոցիալական ապահովության ծառայություն, հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 13, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար՝ Հարություն Գևորգյանի, որի անունից երկու հազար քսան թվականի նոյեմբերի քսաներեքին հաստատված լիազորագրով հանդես է գալիս Ծառայության Իջևանի տարածքային բաժնի խորհրդատու՝ Ալիսա Մուշեղի Ասատրյանը, հաշվառված՝ ՏԱՎՈՒՇ, ԻՋԵՎԱՆ, ԲԼԲՈՒԼՅԱՆ Փ., 6 Շ, 17ԲՆ, մյուս կողմից

կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին

Համաձայնագրի առարկան

1. Կողմ 1-ը և Կողմ 2-ը համաձայն են, որպեսզի միմյանց միջև երկու հազար տասնմեկ թվականի հունվարի տասնութին Իջևան նոտարական տարածքի նոտար՝ Սանամ Սմբատի Հովսեփյանի կողմից հաստատված և սեղանամատյանում թիվ 58-ով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում կատարվի հետևյալ փոփոխությունը 1.4 կետում.

<<Վարձատուն պարտավորվում է անշարժ գույքը վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել մինչև երկու հազար քսանմեկ թվականի դեկտեմբերի քսանհինգը ներառյալ>>: Հիմք ընդունել նաև երկու հազար տասնինը թվականի դեկտեմբերի քսանհինգին <<Տավուշի մարզ>> նոտարական տարածքի նոտար՝ Գուրգեն Գառուշի Անանյանի կողմից հաստատված և սեղանամատյանում թիվ 1551-ով գրանցված պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիրը:

2.Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և 30 աշխատանքային օրվա ընթացքում ԱԳԿՊԿ ցանկացած ստորաբաժանումում գրանցելուց հետո:

3.Սույն համաձայնագիրը վավերացված է հայերեն լեզվով չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է <<Տավուշի մարզ>> նոտարական տարածքում, մյուսները տրվում են կողմերին:

4. Սույն համաձայնագիրը կարող է դադարեցվել դատական կարգով կամ կողմերի փոխադարձ համաձայնությամբ ցանկացած ժամանակահատվածում:

Կողմ -1

<<Իջևանի տպարան>ԲԲԸ
Ի դեմս տնօրեն՝ԳԱՌՆԻԿ ՃԱՂԱՐՅԱՆ ԿԱՄՈՅԻ,
ծնված՝ 26/02/1962թ.-ին, նույնականացման քարտ՝ 000060871,
տրված՝ 21/11/2012թ.-ին, 005-ի կողմից

Կողմ-2

Հայաստանի Հանրապետություն, Սոցիալական ապահովության ծառայություն,
ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար՝ Հարություն Գևորգյանի
լիազորված անձ՝
ԱԼԻՍԱ ԱՍԱՏՐՅԱՆ ՄՈՒՇԵՂԻ,
ծնված՝ 21/12/1976թ.-ին, նույնականացման քարտ՝ 010959856,
տրված՝ 24/09/2019թ.-ին, 038-ի կողմից

ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան

Երկու հազար քսան թվականի դեկտեմբերի իններ: Սույն համաձայնագիրը վավերացվել է իմ <<Տավուշի մարզ>> նոտարական տարածքի նոտար Գուրգեն Գառուշի Անանյանիս, կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում 304 ով:

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար երկու հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Գուրգեն Գառուշի Անանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 29 դեկտեմբերի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Տավուշ, համայնք Իջևան ք. Ա. Մելիքբեկյան փողոց 4 տպարանի շենք

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր 18/01/2011թ. ս/մ 58, Համաձայնագիր պայմանագրում փոփոխություն կատարելու մասին ս/մ. 1551, 25.12.2019թ., Համաձայնագիր 09.12.2020թ. թիվ 904

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

**ՎԿԱՅԱԿԱՆ N 29122020-11-0025, գաղտնաբառ՝ VU4RCVFBHGP4**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ արտադրական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 11-001-0124-0068-001 | Տպարանի շենք | 89.2 քմ | ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

## Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Պայմանագրի գործողության ժամկետը մինչև 25/12/2021թ.

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՆԱԽՇՈՒՆ ՄԻՍԿԱՐՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 29122020-11-0025, գաղտնաբառ՝ VU4RCVFBHGP4**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Կադաստրի կոմիտե